ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Ռաֆայել Ավետիսյանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-20 (Ռուսաստանի Դաշնության) Մոսկվա քաղաքում կայացած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Ռաֆայել Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի սեպտեմբերի 18-20-ը

4.Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակկոմունալ տնտեսության նախարարության դաշնային ինքնավար հաստատության պետական փորձաքննության գլխավոր վարչություն

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2019թ. սեպտեմբերի 19-ին Ռուսաստանի Գլխավոր Փորձաքննության ԴԱԸ և Ռուսաստանի Դաշնության Շինարարության և կոմունալ-բնակարանային տնտեսության նախարարության կողմից կազմակերպվել է "Շինարարության փորձաքննության ինստիտուտի զարգացում" խորագրով III միջազգային գիտաժողովը, որի ներկա էին ԵԱՏՄ անդամ պետությունների(Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Ղրղզսական Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության) շինարարության ոլորտում փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների անդամները: III միջազգային գիտաժողովին մասնակցություն է ունեցել նաև Ուզբեկստանի Հանրապետության շինարարության ոլորտում փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հերթական միջազգային գիտաժողովում ԵԱՏՄ անդամ պետությունների ներկայացուցիչները համաձայնեցին շարունակել հետագա համագործակցությունը՝ ընդգծելով համագործակցության հիմնական ուղղությունները, որոնք հնարավորություն կընձեռեն անդամ պետություններում, միջազգային փորձ ուսումնասիրման հիման վրա, զարգացնել շինարարության ոլորտում փորձագիտական գործունեությունը:

Գիտաժողովի թեմատիկ նստաշրջանը բաղկացած էր երկու մասից, որոնցում ներկայացվում էր ԵԱՏՄ անդամ երկրների շինարարական ոլորտում փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների զեկույցները: Թեմատիկ

նստաշրջանի առաջին մասում անրադարձան շինարարական փորձաքննության ինստիտուտի ներկայիս վիճակին և զարգացմանը վերաբերող հարցերին՝ ընթացող փոփոխությունների համատեքստում, վերլուծվեցին նաև ապագայի զարգացման ուղղությունները:

Թեմատիկ նստաշրջանի երկրորդ մասում հատուկ ընդգծվեցին մի շարք գործնական խնդիրներ, որոնք ծագում են ԵԱՏՄ անդամ երկրների տարածքներում շինարարական փորձաքննության ընթացքում:Գիտաժողովի ընթացքում քննարկվեց նաև փորձագիտական գործունեության ոլորտում միջազգային փորձը, նոր գաղափարներ, մոտեցումներ և լուծումներ, ԵԱՏՄ անդամ երկրների փորձագիտական կազմակերպությունների միջև համագործակցությունն ամրապնդելու հետ կապված հարցեր:

Գիտաժողովի մասնակիցներին Մեր կողմից տեղեկացվել է, որ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից շրջանառության մեջ է դրվելու "Քաղաքաշինության մասին" ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխությունները նախատեսող օրենսդրական նախագիծը, որով Հայաստանի Հանրապետությունում կիրականացվի շինարարության ոլորտում պետական փորձաքննություն: Հետևաբար այս պահի դրությամբ Մենք չենք կարող շինարարության փորձաքննության վերաբերյալ որևէ զեկույց ներկայացնել:

ԵԱՏՄ անդամ մեր գործընկերները իրենց պատրաստակամությունն են հայտնել կիսվել փորձով, անհրաժեշտության դեպքում տրամադրել խորհրդատվություն:

Կարող եմ փաստել, որ նախկին երկու գիտաժողովների արդյունքում որևէ էական քայլ չի կատարվել շինարարության ոլորտում փորձաքննության իրականացման համար:

Այս պահի դրությամբ հրատապ է համարվում օրենսդրությամբ հստակ կարգավորել քաղաքաշինության բնագավառում փորձաքննության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ներդնել շենքերի թվային մոդելավորման համակարգը:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներից առավել արդյունավետ և բովանդակալից բնույթ կրեցին հետևյալ թեմաները՝

- քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման համար նախատեսված էլեկտրոնային հարթակը,

- կենսագործունեության օբյեկտների(քաղաքաշինական գործունեության օբյեկտների) նախագծերի թվայնացում՝ կիրառել շենքերի թվային մոդելավորման համակարգը,

- փորձաքննության իրականացման համար կիրառվող մեթոդաբանությունները,

- շենքերի թվային մոդելավորման միջոցով շենքերի և շինությունների անձնագրավորումը,

- մասամբ բովանդակային բնույթ կրեց շինարարության ոլորտում գնագոյացման մեթոդաբանությունը: ԵԱՏՄ անդամ պետությունները սույն հարցով ունեն տարբեր դիրքորոշումներ:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Հանդիպումներ տեղի ունեցան Գիտաժողովին ներկա բոլոր պետությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվող հիմնական հարցը եղել է փորձաքննության հետ կապված օրենսդրական կարգավորումները:

8. Գործուղվող - Ռաֆայել Ավետիսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը – ***25.09.2019 թվական***